ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 12.03.2016թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 18/16

ԳԲԽ-18/16 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից և հիմք ընդունելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ֆինանսա-տնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-02/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու և պատվիրատուին «Գնումների մասին» ՀՀ օրենքի նշված կետերին համապատասխան տեխնիկական բնութագիր կազմելուն պարտավորեցնելու մասին «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից 22.02.2015թ. ներկայացված բողոքը առանց քննության թողնելու մասին 10.03.2016թ դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 10.03.2016թ. եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-02/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու և պատվիրատուին «Գնումների մասին» ՀՀ օրենքի նշված կետերին համապատասխան տեխնիկական բնութագիր կազմելուն պարտավորեցնելու մասին «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից 22.02.2015թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամ՝ **Սարգսյան Մարիամ**

Գասպարյան Համլետ